խաչը ամեկնած. մօթանքը ծածկուած ըստվածանելիքով մինչև ծնկները, նշաններ, որոնցից մի քանիսը մօտենում են մեր Ամենափրկչի խաչելութեան։

Մի երկրորդ մանրանկար խաչելութեան առնուած է Կարնոյ Շիրնոց գիւղի աւետարանից, որի անունով և կոչւում է աւետարանը, վերջին պատերազմի ընթացքում Էջմիածին բերուած. գրուած է 1038 թուին Եւարգրիս (s!) գրչի ձեռքով. «Գրեցաւ սուրբ աւետարանս այս ձեռամբ իմով Եւարգրիս մեղուցեալ եւ անարժան կրաւնաւորի՝ ի թուականութեան հայոց ՆԶԷ ի հայրապետութեան Տն Պետրոսի եւ գկնի նորա կենդանութեան նոտաւ այդ հայրապետ որ կոչի անուն նորա Դիոսկորոս եւ ի թագաւորութեանն յունաց Միխայելի բարեպաշտի»։ Ձեռագիրը զարդարուած է խորաններով և տնօրինականներով, արժէքաւոր հայ արուեստի համար բերած նորութիւններով. մանրանկարներից մէկն էլ (7բ) խաչելութիւնն է (3½ × 24,2 սմ.), որ աչքի է ընկնում իւր բարդութեամբ (պատկ. 22)։ Աջից և ձախից խաչուած են երկու աւազակները, իսկ խաչի տակ կանգնած են ոչ միայն Մարիամ և Յովհաննէս, այլև գինուորներից մէկը խաչեցեալի աջ կողմն է խոցում, միւսը ձախից սպունգ մօտեցնում Յիսուսին. Մարիամի յետևից էլ կանգնած են երկու կանայք, իսկ Յովհաննէսի յետևից հարիւրապետը։ Յիսուսի գլուխը թեքուած է դէպի մայրը և մեխուած տեղերից արիւն է կաթկթում, նշաններ, որոնք մատնանշում են աւելի ուշ ժամանակի ծագում, քան մեր Սբբութիւնը։

Պատկեր 22

Շիրնոցի աւետ. մանրանկար 1038 թ.

ԺԱ.

Մեզ հետաքրքիր է քննութեան առնել Հաւուց Թառի Ամենափրկչի խաչեցեալի գլուխին սաւառնող, թեւատարած թռչունը և վերից օրհնող աջը։ Թռչունը աւելի նման է արծուի(1), բայց աղաւնի է այստեղ, ընդհանրացած քրիստոնէական արուեստի մէջ իբրև Ս. Հոգու կամ մարդկային հոգու նշանակ. վերջին նշանակութեամբ օրինակներ ունինք կատակոմբաների մէջ Դ. դարից էլ առաջ, իսկ այնուհետև շատ յաճախ Դ–Զ. դարի փղոսկրի դիպտիխների կամ սարկոֆագների վերայ, խաչի հորիզոնական թեւերին դէմ առ դէմ գոյգ աղաւնիներով կամ մի մի հատ Քրիստոսի մոնոգրամի կամ խաչի գլխին(1)։

Նոյն երևոյթը նկատում ենք և Դ–Ե. դարի հայ արուեստի մէջ, ինչպէս Էջմիածնի հիւսիսային պատին (պատկ. 23) կամ

(1) Արծիւը խաչելութեան հետ երևան է գալիս իրլանդական արուեստի մէջ որ բան Strzygowskiի մեծ կապ ունի արևելքի հետ։ Reilp Krenzigung 121 եւ տախտ. V. կապում է դիցաբանութեան հետ։

(1) Kraus. I. 99. 253։ Kaufman. Christ. Archäol. 294. 311–313. 506։